Թէ ո՛րպէս ուղղեն զանկեալ դրգալն սրտին, այսչափ ինչ կարեմ գրել։ Ոմանք հաւատան այսմ, և ոմանք ոչ հաւատան։ Ոմանք ի չհաւատացողացն հաւատացին ի փորձն։ Ոմանք ի հաւատացողացն զարհուրին ի տեսանելն զուղղելն. քանզի ուղղիչքն դրգալին սրտին ո՛չ դեղ տան և ոչ դեղ գիտեն, բայց միայն թէ զկնի ուղղելոյն, դնեն եախը անդէն զի պնդեալ մի՛ ևս անկցի։ Իսկ ուղղելն՝ այսպէս առնեն. նախ մատամբն նայի և քննէ զկուրծն. և ճանաչէ զանկեալն, զի տեսանէ զոսկրն ի՛ ներքս մխեալ, և ապա՝ ոըպխսի և իցէ իւղով չփէ սակաւ ինչ զկուրծն. և ապա ի թիկանցն երկու ձեռօքն ի վեր ուղղէ զկուրծն երկիցս և երիցս. երբե[մ]ն և սասլէ զանձն նորա. և ահա ուղղեցաւ գրդալն։ Եթէ պիտոյ է, և զքամակն չփէ. այսպէս առնէ երեք օր անօթի փորանց։ Ոմանք ի տգիտացն զայն տեսեալ, արարին ոմանց. բայց վնասեցին։ Իսկ գիտունքն բժշկեցին զոմանս։ Նշան անկման դրգալին՝ նմանին նշանաց օստուքցիօնին. քանզի որոյ դրգալն սրտին անկեալ է, երբե[մ]ն երբե[մ]ն սրսռայ ի թիկանցն. կերեալ կերակուրն մնայ ի սրտին իբրև գքար կամ իբրև զցից. երբեմն բսխէ։ Ինքն ևս իմանայ զի ի սիրտն մտանէ իբր թէ ոսկր ինչ։ Օրըստօրէ նիհարանայ. դեղք բժշկաց ո՛չ օգնեն նմա։ Զայսոսիկ գրեցի հարևանցի զի ոչ գիտեմ զիսկն և ոչ զարուեստն, զի ըստ այնմ գրեցից մի ըստ միոջէ զուղիղն։ Պատճառք անկման դրգալին սրտին այս են. զի անկանի երբե[մ]ն յամբառնալոյ զծանրագոյն ինչ. երբե[մ]ն ի ձկտմանէ ի վեր. երբե[մ]ն յանկմանէ վերուստ ի վայր։ Երբեմն ևս ի յօրանջմանէ անկանի. զոր օր. անկանի աղիքն կամ պորտն մարդոյն։ Դեռ ոչ կարեմ գրել աւելի քան զայս։

Ի կողմանէ քաղաքիս, երբե[մ]ն և ցանցառակի պատահին նուազ երկրաշարժութիւնք։ Մինչև ցայսօր լուաք զերիս կամ զչորս անձինս մեռանիլ ի ժանտամահէ։...

Ցամին 1769 *ի յուլիս* 1
ի Ղալաթիա

Ն. Ծ. Հ. Յակոբոս վրդպ. Զամչեանց
Մխիթարեան

ՄՁԹ.

Երեք Մխիթարեան վարդապետներ որ Հնդկաստան կ՚ուղևորին՝ Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքին և Ագրիի վրայօք տեղագրական ծանօթութիւններով իրենց տպաւորութիւնները կը գրեն։

Գերապատիւ աբբահօր մերում տեառն Ստեփաննոս բարունապետի
խոնարհական համբուրիւ աջոյն՝ ողջոյն ի Քրիստոս

... Այս քաղաք [Աղեքսանդրիա Եգիպտոսի] հեռի է ի ծովայ չորից աւու[ր]ց ճանապարհաւ, յոր գնան նաւակաւ ընդ գետ. դիրք քաղաքին տափականիստ է, և ծովեզերեայ. ունի զերկու նաւահանգիստ, մինն, որ հին կոչի, է տաճկաց, յորում են մեծամեծ նաւքն ծովայ. իսկ միւսն ի քրիստոնէից. յորում ի մտանել մեր անդ, էին իբրև 25 *նաւք, բայց հասարակօրէն լինին իբր* 50 *կամ* 60 *և աւելի ևս. ցորչափ անդ էաք, յաւուրն մի կամ երկու, և երբեմն հինգ նաւք մտանէին անդ. շինուածք քաղաքին գրեթէ առ հասարակ բարձր են և յանտաշ քարանց. և ունին զտանիս. են ի նմա բազում յոյնք և հրէայք։ Արք քաղաքին են թխադէմք, և ըստ որում տեսաք, ոչ ունեք առնեն զչար, այլ մանաւանդ մարդասիրութիւն ցուցանեն. և եթէ ակն ունին ընդունիլ յումեքէ զբարերարութիւն, ամենայն սիրով իբրև ստրուկ ծառայեն։ Օդն է ջերմ քան զՎենետկոյ, մինչև յամսեանն մայիսի գտանիլ անդ ձմերուկ. սակայն յամառան հանապազ շնչէ հողմն հիւսիսային արևմտեան, որով զովանայ օդն...։ Այս քաղաք [Ագրի] ծովեզերեայ է. և ունի հանդէպ իւր ի կողմն հարաւոյ զլեառն կարմեղոս, որ ձևացուցանէ զնաւահանգիստ քաղաքին, յորում ի մտանել մեր անդ, էին երեք նաւք փռանկաց, մին ինկիլիզի, և երկուքն ֆռանսըզի։*